

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՈՒՄ

Հայոց Հայրապետին ուղղած իր նոյեմբեր 24 թվակիր պաշտոնական գրության մեջ եգիպտահայոց առաջնորդական տեղապահ **տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանը** հաղորդում է վերջերս Կահիրեում և Ալեքսանդրիայում կատարված թեմական ամբողջական ընտրությունների մասին, ըստ համայնքի ներքին կանոնագրքի, և Նորին Սուրբ Օծությանն է ներկայացնում «զույգ թեմական ժողովներու և անոնցմե բխող բոլոր մարմիններուն հավատարմական և որդիական զգացումները»:

Հոկտեմբերի 26-ին կատարվել են Կահիրեի թեմական ընտրությունները՝ «համերաշխ և եղբայրական մթնոլորտի մը մեջ»:

Ընտրությանը մասնակցող բոլոր կազմակերպություններն ու շրջանակները նախապես մամուլին են հանձնել մի համաձայնագիր՝ ազնիվ ու բարի նպատակ ունենալով ընտրություններին ներկայանալ «համագործակցական ցանկով մը, կարենալ իրագործելու թեմիս եկեղեցական, կրթական, կալվածական և վարչական գործերը»:

Կողմերի սույն համաձայնագիրը ջերմորեն և խանդավառությամբ է ընդունվել «իբրև արտահայտությունը՝ ողջմիտ և գիտակից ընտրողներուն զգացումներուն ու կամքին»:

Հոկտեմբերի 26-ին ընտրվել են Կահիրեի թեմական ժողովի 24 անդամներ:

Հոկտեմբերի 31-ին նորընտիր թեմական ժողովը գումարել է իր առաջին նիստը և ընտրել իր Դիվանը.

Պոլ Քիլիտջյան՝ ատենապետ.

Դոկտ. Սուրեն Բայրամյան՝ ատենադպիր:

Ապա տեղի է ունեցել Գործադիր մարմնի կամ Քաղաքական ժողովի յոթ հոգուց բաղկացած կազմի ընտրությունը.

Վահան Չեչենյան՝ Ա. ատենապետ.

Սարգիս Սարգիսյան՝ Բ. ատենապետ.

Նորայր Տեովլեթյան՝ ատենադպիր:

Նոյեմբերի 9-ին տեղի են ունեցել նաև Ալեքսանդրիայի հայոց թեմական ժողովի ամբողջական ընտրությունները, դարձյալ

համերաշխ ու եղբայրական մթնոլորտում:

Այստեղ ևս ընտրվել են թեմական ժողովի 24 անդամներ:

Թեմական ժողովը նոյեմբերի 21-ին գումարել է իր առաջին նիստը և կազմել իր Դիվանը.

Մարտիկ Զարպհանելյան՝ ատենապետ.
Նորայր Պենջհանյան՝ ատենադպիր:

Ապա ընտրվել է յոթ հոգուց բաղկացած Քաղաքական ժողովի նոր կազմ.

Վահան Այեքսանյան՝ Ա. ատենապետ.
Ստեփան Ստեփանյան՝ Բ. ատենապետ.
Նուբար Դավթյան՝ ատենադպիր:

Թեմական ժողովների ընտրությամբ եգիպտահայոց թեմի կյանքը մտել է իր բնականոն ընթացքի մեջ:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ է տեղեկանում եգիպտահայ թեմում կատարված պատգամավորական ընտրությունների արդյունքների մասին և շնորհավորում այդ ընտրությունները՝ այն ջերմագին բարեմաղթությամբ, որ եգիպտահայ թեմի եկեղեցական, կրթական, մշակութային, ազգային գործերը շարունակվեն այսուհետև համերաշխ ու եղբայրական մթնոլորտում՝ ի սփոփանս հայրական Իր սրտի և ի միխիթարություն թեմի հայության, ի պայծառություն մեր եկեղեցիների ու կրթական հաստատությունների, եգիպտացի ազնիվ ու հյուրընկալ ժողովրդի ծոցում, որ հայ ժողովուրդը ապրում է խաղաղ ու բարօր՝ որպես շինարար ու կարգապահ քաղաքացի մեծ Եգիպտոսի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, շնորհավորում է եգիպտահայության թեմական ընտրություններում հանդես եկած համերաշխության ոգին՝ բարեմաղթելով, որ համագործակցության շինարար ու ազգօգուտ այդ նոր ոգին դառնա ամուր հիմքը թեմի եկեղեցական, կրթական, ազգային բեղուն գործունեության բոլոր բնագավառներում և ապացույցը՝ եգիպտահայ թեմի կենսունակության ու բարօրության՝ ի փառս մեր սուրբ եկեղեցու և ի միխիթարություն մեր ժողովրդի: